



Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահական Խորհուրդ

Presidential Council of the Republic of Western Armenia

Նախագահական հրամանագիր N° 40.2017.03.04

**Նախագահ Վուդրո Ուիլսոնի ճանչնալ որպէս «Արդարադատ գործիչ»
Հայաստանի համար**

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը, Նախագահ Արմենակ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԸ, Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւնը, ինչպէս նաեւ ցեղասպանութեամբ եւ բռնի ուժով տեղահանումներ վերապրածներն ու անոնց սերունդները, որոնց դէմ 1894-1923 թուականներուն թիրաքական իրաւայաջորդ իշխանութիւններուն կողմէ տեղի ունեցան հայ բնիկ ժողովուրդի բնաջնջումը իրենց հայրենիքի՝ Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ՝

Խոր երախտագիտութեամբ յիշելով ԱՄՆ-ի Նախագահ Վուդրո Ուիլսոնի հետեւեալ նախաձեռնութիւնները.



- Անոր տեսակէտը պարզ էր, անհրաժեշտ էր իսաղադութիւն եւ կայունութիւն աշխարհին՝ որուն կարելի էր հասնիլ Փոքր Ասիայի եւ Մերձաւոր Արեւելքի

մեջ սկսելով արդարացի լուծում գտնել հայերու իրաւունքներուն վերաբերեալ:

- 1918 թուականի Յունուար 8-ին Անոր կողմէ առաջարկուած 14 կէտերը՝ որպէսի խաղաղ լուծում տրուի առաջին Համաշխարհային Պատերազմին: Յատկապէս կէտ 12-ը, ուր Ան հաստատած է "...Սակայն մնացած ազգերը՝ ովքեր հիմա կը գտնուին Թիրքական տիրապետութեան ներքոյ, մենք պետք է ապահովենք անոնց կեանքի անվտանգութիւնը եւ անխոչընդոտ հնարաւորութիւններ ստեղծենք անոնց ինքնավար զարգանան համար:"
- Անոր աշխոյժ մասնակցութիւնը եւ հեղինակութիւնը Վերսայլի Խաղաղութեան Վեհաժողովին՝ հանգեցուց Հայկական Պետութեան եւ Հայաստանի անկախութեան *դէ ֆակտո* միջազգային ճանաչման 1920 թուականի Յունուար 19-ին:
- Հայաստանի Հանրապետութիւնը ԱՄՆ կառավարութեան կողմէ *դէ ֆակտո* ճանչցուած է 1920 թուականի Ապրիլ 23-ին, եւ *դէ յուրէ* 1920 թուականի Մախա 11-ին:
- Իրաւարար վճիռը հայ-թիրքական միջազգային սահմանին վերաբերեալ՝ 1920 թուականի Նոյեմբեր 22- ին:

Հիմք ընդունելով վերը նշուած պայմանները, եւ Վուդրո Ուիլսոնի արաջին գահակալման 104-րդ ամեակը որպէս ԱՄՆ-ի 28-րդ Նախագահ (04.03.1913),

Ինչպէս նաեւ բոլոր անխոնջ ջանքերը, որ Ան դրած է որպէսզի վերջ դնէ բոլոր պատերազմներուն՝ իրական խաղաղութիւն և կայունութիւն հաստատելու բոլոր ազգերու համար:

Այս ամբողջով, Ան կը ներկայանայ որպէս «Արդարադատ Գործիչ»՝ մեր ժողովուրդին համար:

Ուստի Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւնը, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան Պետութիւն) անունով պաշտօնապէս Անոր կը շնորհէ «Արդարադատ Գործիչ» տիտղոսը՝ եւ շրջանառութեան մեջ կը դնէ զայն:

Արմենակ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ